մայրաքաղաքն Կաֆա և 'ի հոյակապն Սուրխաթ գը-բեալք, ընդ հովանեաւ զանազան եկեղեցեաց, 'ի ձեռն փցռոն և մեղսամեղ երիցանց և աբեղայից։ Ձեռագիրքս թղթատած միջոցիս, որոց կոկիկ և վայելչաձև գրչութեանց վրայ ոչ սակաւ ախորժա-նք կը զմայլէի, մտաք լատին բառերն կ'որոճայի Sic transit gloria mundi. Երբեմն բազմաթիւ հայ գաղթականաք, չէն հայ եկեղեցեաք և բազմագոյն ևս հայագէտ հոգևորականաք պայծառացեալն Կա-ֆա, այժմ նկուն և անփառունակ. շատք յեկե-ղեցեաց հիմնայատակ, մնացեալ դատարկ, և նո-ցա ծուխն և ժողովուրդ՝ ասա՝ Դօնեան աշխարհ-քը չէնցընելու քշուած։

Եթէ այդ ձեռագիրք, նոյնպէս և այլ եկեղե-ցեաց մէջ գտնուածք, նոյն և որք առանձնակա-նաց մօտ կը գտնուին, մանր քննուին, ոչ սա-կաւ տեղեկութիւն կարելի է հաւաքել, ինչպէս ազգիս ընդհանուր պատմութեան, նոյնպէս և աւե-լի ևս Ղրիմեցի գաղթականաց մասին։ Մեծա-պատիւ Գրիգոր աղա Սալթիքեան, որ այժմ ար-ժանաւոր քաղաքագլուխն է Նախիջևանու, խոս-տացաւ Ս. Լուսաւորչի մօտ չինել տալ առաձին գրատուն գրչագրաց համար, և հոն ժողովել այդ թանկագին յիշատակարանները։

Երկու մեծ ծառայութիւն պիտի մատուցանէ ազգիս Գրիգոր աղա այդ գրատան չինութեամբ. մին՝ հաւաքելով 'ի մի տեղ ձեռագիրները, կոր-սուելու և ասա և անդ ցիրուցան լինելու վտանգը կը վերանայ. և երկրորդ՝ ազգիս դպրութեան համար վաստակող անձին մեծ դիւրութիւն կը լինի, ամփոփ գտնելով այդ կարևոր գործիքը. կը փա-